ԿԱՐԾԻՔ

Սիլվի Վահեի Թարջումանյանի «Ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալները ծնողական դեպրիվացիայի պայմաններում» թեմայով ատենախոսության ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Հասարակության զարգացման արդի փուլը նորանոր պահանջներ է առաջադրում մարդու սոցիալ-հոգեբանական հատկությունների, որակների վերաբերյալ: Հաղորդակցման հմտություններից է կախված բազում կարևորագույն հարցերի լուծումը ամենատարբեր բնագավառներում: Չեն կորցնում իրենց արդիականությունը, այլ հակառակը գնալով ավելի են կարևորվում անձի ինքնիրացման, կյանքի իմաստի, ինքնագնահատականի, սթրեսակայունության հիմնահարցերը:

Դժվար է գերագնահատել երեխայի սոցիալիզացիայի վաղ փուլի ազդեցությունը անձի բնականոն զարգացման, իսկ հետագայում ինքնիրացման գործընթացի համար: Բաց թողնելով զարգացման սենզիտիվ տարիքը մեծ դժվարություններով է պայմանավորվում ողջ հետագա զարգացումը, որն կառուցվում է նախորդ ձեռքբերումների վրա, ինչպես բարձրահարկ շենքը իր հիմքի վրա: Սոցիալիզացիայի վաղ փուլերում երեխայի զարգացման համար կարևոր է հուզական հաստատուն կապեր կառուցելը մեծահասակի հետ, հատկապես կարևոր է ծնողների, հատկապես մոր հետ սերտ հուզական կապն ու շփումը: Սակայն փոփոխվող ժամանակակից կյանքը հաճախ ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են ամուսնալուծությունների թվի աճին, սոցիալական անապահովությունը դրդում է միայնակ մայրերին տեղավորել երեխաներին մանկատուն կամ այլ խնամքի հաստատություններ, իսկ երբեմն երեխան, շարունակելով ապրել ընտանիքում, զրկված է լինում պատշաճ ուշադրությունից ծնողների աշխատանքային զբաղվածության կամ սեփական խնդիրները լուծելու անհրաժեշտության պատճառով: Առաջանում են բարվոք

պայմաններ սոցիալական ծնողական դեպրիվացիայի առաջացման համար, ինչը կարող է իրական վտանգ ներկայացնել թե՛ երեխայի բնականոն զարգացման, թե՛ սոցիալ-հոգեբանական, հաղորդակցման հմտությունների զարգացման համար, իսկ դրա հետևանքով կարող է մեծ ազդեցություն ունենալ նոր ձևավորվող անձի կյանքի ողջ ընթացքի վրա:

Այս տեսանկյունից Սիլվի Վահեի Թարջումանյանի ատենախոսությունը արդիական է և ունի մեծ կարևորություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից երկուսը տեսական վերլուծություններ են, երրորդը՝ գործնական հետազոտություն, եզրակացություններից և գրականության ցանկից: Գրականության ցանկը բաղկացած է 112 աղբյուրներից, որոնցից 8-ը հայերեն, 50-անգլերեն, 54-ը ռուսերեն լեզուներով:

Հետազոտական մասում ստացված արդյունքները ներկայացված են աղյուսակներով և նկարներով, կիրառվել են մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ, առկա է նաև հավելված, որտեղ ներկայացված են կիրառված թեստային մեթոդիկաները և մաթեմատիկական վիճակագրական մեթոդների կիրառումը փաստող տվյալները:

Ներածության մեջ հեղինակը փորձել է համակողմանի ձևով հիմնավորել հետազոտության արդիականությունն ու նշանակությունը, սահմանել է օբյեկտը, առարկան, ներկայացրել իր վարկածը: Առաջադրված վարկածն այն է, որ անձի ինքնիրացման գործընթացը պայմանավորող կյանքի նպատակները, կյանքի իմաստը և ինքնավերաբերմունքը նպաստում են ծնողական դեպրիվացիա ունեցող և առանց ծնողական դեպրիվացիայի անձանց ինքնիրացման հնարավորությունների հավասարեցմանը: Ներածության մեջ նշված են նաև ընտրված հետազոտական մեթոդները, հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը:

Ատենախոսության առաջին տեսական գլխում նկարագրված է դեպրիվացիայի երևույթը, ծնողական դեպրիվացիայի վերաբերյալ հիմնական տեսությունները, անդրադարձ է արվում հասկացության համեմատական

վերլուծությանը մոտ հասկացությունների հետ, ինչպիսինն են ֆրուստրացիա, սեպարացիա, կոնֆլիկտ և այլ:

Ուշադրություն է դարձվում տարիքային գործոնին, ինչը շատ կարևոր է, երբ խոսքը գնում է մանկական զարգացման մասին, որտեղ յուրաքանչյուր տարիքային շրջան ունի իր առանձին նշանակությունը: Նկարագրված է նաև, թե ինչպես են նպաստում ծնողական դեպրիվացիային մանկատան պայմանները, խոսվում է նաև հոգեբանական օտարացման, մեկուսացման մասին անգամ ընտանիքում ապրելու պարագայում: Աշխատանքում նշված են նաև ծնողական դեպրիվացիայի հետևանքները:

Երկրորդ տեսական գլխում նկարագրվում են ինքնիրացման գործընթացի առանձնահատկությունները, տրվում են հասկացության մեկնաբանություններ, հիմնական մոտեցումներն այնպիսի հեղինակների, ինչպիսինն են Ա.Մասլոուն, Կ.Ռոջերսը, Գ.Օլպորտը, Ռ.Մեյը, Ա.Ն.Լեոնտևը և այլ: Եզրակացություն է արվում ինքնիրացման և կյանքի իմաստի միջև փոխկապակցվածության վերաբերյալ, նրա վերաբերյալ, որ ինքնիրացումը կյանքի իմաստի որոնման և նպատակի առաջադրման մղող ուժն է:

Ատենախոսության գործնական երրորդ գլխում անդրադարձ է արվում անձի ինքնիրացման և ծնողական դեպրիվացիայի միջև կապերի բացահայտման փորձարարական հետազոտմանը: Գործնական մասում հետազոտվողները բաժանվել են երկու մասի՝ ըստ պատասխանների, որոնք իրենք տվել են հեղինակի կողմից մշակված և ներկայացվող 14 հարցից բաղկացած հարցարանին: Բոլոր պատասխանները ենթարկվել են որակական վերլուծության, և կատարվել է բաժանումը խմբերի: Առաջին խմբում ընդգկվել են անձինք, որոնց պատասխանների որակական վերլուծության արդյունքում հեղինակը պնդում է իրենց մոտ սոցիալական դեպրիվացիայի առկայության փաստը, իսկ երկրորդ խմբում՝ անձինք դեպրիվացիայի գործոնի բացակայությամբ:

Վերոնշյալ խմբերի հետ անցկացվում են ընտրված մեթոդիկաները՝ ինքնիրացման գործոնների վերաբերյալ, կենսաիմաստային կողմնորոշումների, ինքնագնահատականի, սթրեսի մակարդակի որոշման: Ստացված արդյունքերն

ամփոփվում և համեմատվում են, դուրս են բերվում արդյունքերի միջև առկա կապերը:

Ստացված արդյունքների վերլուծության հիման վրա հեղինակը կատարել է որոշակի եզրակացություններ, արել գործնական առաջարկություններ:

Ատենախոսական աշխատանքը ամբողջական բնույթ է կրում, սակայն կարելի է նշել մի շարք դիտողություններ՝

1. Հստակ պետք է նշվեին ծնողական դեպրիվացիայի հատկանիշները, չափորոշիչները՝ որ դեպքում մենք կարող ենք փաստել, որ հարցվողը իրոք մանկական տարիներին ունեցել է ծնողական դեպրիվացիա: Ատենախոսը առանձնացրել է դեպրիվացիայի վերաբերյալ հարցեր, որոնց ընտրությունը հիմնավորված չէ գրական աղբյուրներով և կրում է սուբյեկտիվ բնույթ: Այդ հարցերին պատասխանները նա ենթարկել է որակական վերլուծության, որի մասին աշխատանքում չի խոսվում և պարզ չի դառնում, թե ինչ եղանակով են առանձնացված հետազոտական խմբերը:
2. Ավելի հստակ հիմնավորում է պահանջում մեթոդների ընտրությունը՝ ինչու ինքնիրացման և կենսիմաստային կողմնորոշման թեստի հետ մեկտեղ ընտրվել են հենց սթրեսի, ինքնագնահատականի չափման թեստային մեթոդիկաները:
3. Բավականաչափ ներկայացված չեն հարցազրույցի արդյունքները, որոնց շնորհիվ կարող էին դուրս բերվել էլ ավելի շատ տարբերություններ երկու հետազոտական խմբերի միջև:
4. Ցանկալի կլիներ, որ միակողմանի ծնողազուրկ, երկկողմանի ծնողազուրկ, ծնողի փաստացի առկայությամբ, բայց ներկայության պակասի զգացողությամբ երիտասարդները միավորված լինեին ոչ թե մեկ խմբի (դեպրիվացիայի ենթարկված անձանց խմբի) մեջ, այլ առանձին խմբեր կազմվեին, քանի որ այս տարբեր կյանքի իրավիճակները տարբեր հոգեվիճակների կարող են հանգեցնել:

5. Քննադատելի է «դեպրիվացված երեխա», «դեպրիվացված անձ» հասկացությունների կիրառումը (էջ 100, 107), քանի որ դա բերում է ստիգմայի ձևավորմանը մանկական տարիներին դեպրիվացիայի իրավիճակում գտնվող/գտնված անձի նկատմամբ, և ցանկալի է կիրառել դեպրիվացիայի իրավիճակում գտնվող անձ հասկացությունը:
6. Հետազոտությունը կշահեր, եթե հետազոտական խմբերից մեկում ընդգրկված լինեին երիտասարդներ, որոնց կյանքի նպատակներն ու իմաստները խոչընդոտում են ինքնիրացմանը/բերում են ձախողմանը/, քանի որ նման համեմատությունը ավելի դուրս կբերեր ուսումնասիրվող գործոնը

Անկախ նշված դիտողություններից և դիտարկումներից, հեղինակը իրականացրել է լայնածավալ, արդիական, մեծ արժեք ունեցող հետազոտություն, իրականացրել է այն գրագետ և հետևողական, հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը համապատասխանող աշխատանքին հատուկ կերպով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սիլվի Վահեի Թարջումանյանի «Ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալները ծնողական դեպրիվացիայի պայմաններում» թեմայով ատենախոսության «ԺԹ 00.01 Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն գիտական ավարտուն աշխատանք է: Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը արտացոլված են սեղմագրում, ատենախոսության և սեղմագրի մեջ ներկայացրած գիտական խնդիրների ձևակերպումն ու բովանդակությունը համահունչ են:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը, բովանդակությունը, տեսամեթոդաբանական հիմքը, կատարված հետազոտության ներկայացման ձևը, արված եզրակացությունները համապատասխանում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության հեղինակ Սիլվի Վահեի Թարջումանյանը, հաշվի առնելով իր կողմից իրականացված, գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխանող ատենախոսությունը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Երևանի պետական համալսարանի գիտ. քարտուղար Մ.Հովհաննիսյան

Լ.Վ.Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ

Հոգ.գիտ.թեկնածու, դոցենտ Լ.Բաղդասարյան

13. 05. 24թ.